

ԼՈՒՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին
ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ

E-mail: harutyunyanlusya@gmail.com

ՀՏԴ 070.48

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ԹԱՏՐՈՆ. ԲԱՐԵԿԱՍ ՄԱՆԿԱՆՑ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ԱՌԻԹՈՎ

Բանալի բառեր և արտահայտություններ. Հակոբ Պարոնյան, երգի-
ծաբան, «Թատրոն. բարեկամ մանկանց», մանկապատանեկան մամուլ,
պարբերական, հրատարակություն, խորագիր, պատմվածք, ժողովրդական
բանահյուսություն:

Ключевые слова и выражения: Акоп Паронян, юморист, “Театр — друг
детей”, детский пресс, газета, издание, заголовок, история, фольклор.

Key words and expressions: Hakob Paronyan; humorist, “Theatre. Friend of
children”, children press, periodical, edition, headline, story, folklore.

Արևմտահայ գրականությանը նվիրված գրքերում, տարաբնույթ
հոդվածներում հպանցիկ է անդրադարձ կատարվել «մանկական
հատվածին»: Նկատելի է, որ արևմտահայ գրողների ստեղծագործու-
թյուններից շատերը հասցեագրված են նաև կրտսեր, միջին և բարձր
տարիքի երեխաներին ու պատանիներին, բայց նրանցից քչերն են գրել
հատկապես երեխաների համար: Նույնիսկ հայ մանկապատանեկան
գրականության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում,
արևմտահայ մանկագրության անդրադարձներն ընդհանուր բնույթ են կրել:

1876-ի հունվարի 1-ին հրապարակ է գալիս «Թատրոն. բարեկամ
մանկանցի» առաջին համարը: Դա ըստ էության առաջին մանկական
պարբերականն էր հայ իրականության մեջ¹: Խնամքով տպագրված,
գեղեցիկ նկարներով զարդարված, բազմազան նյութեր պարունակող մի
հրատարակություն էր, որն անկեղծ զրույց էր խմբագրի և երեխաների միջև:

¹ Դեռևս 1855 թ. Մեսրոպյան վարժարանի սաների ջանքերով Զմյուռնիայում լույս են
տեսել «Թուրթակ հայկազյան» և «Երկասեր» պարբերականները, որտես տպագրվել
են նաև մանկական երկեր, համելուկներ, սակայն դրանք դժվար է համարել
մանկական պարբերականներ: Բրավացի է այն դիտողությունը, թե «Թուրթակ
հայկազյանը» «ավելի շուտ դպրոցականների ընթերցանության համար
նախատեսված նյութերի ուրույն ժողովածուի տպավորություն է թողնում» (Մ.
Հակոբյան, Հայկական մանկական մամուլի առաջին օրգանները,
«Պատմաբանասիրական հանդես, 1963»):

Դեռևս իր խմբագրած նախորդ պարբերականի՝ «Թատրոնի» ծանուցագրում նա ընդգծել էր, որ «ազգային մանկտույն դաստիարակության և հմտության նպաստելու մտքը՝ որոշած եմք առաջիկա տարեգլխեն սկսեալ թերթ մը հրատարակել...», որ գեղեցիկ պատկերով զարդարյալ ըլլալեն ի գատ, պիտի պարունակէ կրթական, բարոյական, պատմական, վիպական և այլ տղայոց միտքը սրելու հատուկ հոդվածներ: Պիտի ջանանք զիրենք ընթերցանության և ուսման ընտելացնել...»²: Պարոնյանը նշում է, որ այն երեխաների համար լինելու է «գրական ծաղկոց մը»:

Մանկական պարբերականի խմբագիրը մանուկներին հասցեագրված գրականության հիմնական գաղափարներից մեկն էր համարում մարդասիրությունը: Նրա նպատակն էր՝ դաստիարակել հասարակական պարտքի բարձր զգացումով օժտված, ինչպես և ճշմարտության ու ժողովրդի բարօրության համար պայքարող մարդ-քաղաքացուն: Ճշմարտությունը հեշտ ու հանգիստ ձևով չի հաղթանակում: Չար ու նենգ մարդկանց կողմից ճշմարիտը, բարին հաճախ բռնադատվում են: Պարոնյանը փորձում էր ցույց տալ, թե ովքե՞ր էին ազնիվ ու արդար վաստակով ապրող մարդկանցից խլում գեղեցիկը, բարին, լավը: Ծնողներին ու դաստիարակներին գործարար խորհուրդներ էր տալիս, թե ինչ պետք է անի նրանցից յուրաքանչյուրը «պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի» պատրաստելու համար: Այդ քաղաքացու առաջին հատկանիշը հայրենասիրությունն է. «...Որ ազգեն ալ որ ըլլաս, ինչ վիճակի մեջ ալ որ գտնվիս, դու պահապան զինվոր մըն ես հայրենիքիդ, նա ալ իրավունք ունի քու գիտությանդ, առաքինությանդ, զգացմանդ և բոլոր գործերդ արդյունքը վայելելու: Մի հարցունք թե ինչ է քու պարտքդ հայրենիքիդ. սիրե ու կը սիրվիս: Ջինվո՞ր ես, հայրենիքիդ ծառայել մտածե, արհեստավո՞ր, ճարտարությունդ բանեցուր հայրենիքիդ զարգացման համար, գիտո՞ւն, հայրենիքիդ օգուտը խորհե և ուրիշին սորվեցուր»³:

«Թատրոն. բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթի առաջին համարի խմբագրականն ընթերցողներին ծանոթացնում է պարբերականի ծրագրին, բովանդակությանը, առաջադիր նպատակներին. «Իմ պզտիկ կարդացողներս. այս «Թատրոն» լրագիրը 15 օրը հեղ մը պիտի տպվի՝ հատկապես ձեզի համար: Ինոր որ ձեր հայրերը կամ ձեր մեծերը ամեն օր խոշոր լրագիրներ կը կարդան բան հասկանալու համար, անանկ ալ դուք այս «Թատրոն» կարդալով ձեր չգիտցած շատ բաները պիտի սորվիք: Շատ դասեր պիտի տամ ձեզի, և ամեն շաբաթու համար պիտ

² «Թատրոն», 1875, №175, էջ 2:

³ «Թատրոն. բարեկամ մանկանց», 1877, №25, էջ 99:

նայիմ. երբ որ դասերնիդ աղեկ սերտած ըլլաք, պիտի թոխեմ համարնիդ. նորըզնոր դասեր պիտի տամ, զբոսանքներ ալ պիտի սահմանեմ ձեզի, աղվոր պատմություններ պիտի պատմեմ, խաղեր պիտի սովորեցնեմ, հանելուկներ (պիլմեճե) պիտի ըսեմ ձեզի, որ լուծեք: Եվ այս ամեն բաները աղեկ հասկցնելու համար՝ գեղեցիկ պատկերներ ալ պիտի դնեմ այս «Թատրոնին» մեջ, անոր համար՝ չըլլա որ այս լրագիրը պատռտեք կարդալեն ետքը, հապա՝ պահեցեք, ինտոր որ ձեր խաղալիքը կը պահեք. գալ անգամ նոր «Թատրոն» մըն ալ պիտի խրկեմ ձեզի, ասոր քովը դրեք և իրարու կարեցեք. Ասանկ ամեն անգամ մեյ-մեկ նոր «Թատրոն» առնելով՝ մեկ տարվան մեջ խոշոր գիրք մը ունեցած կըլլաք...»⁴:

Ինչ ծրագրով էր ներկայանում Պարոնյանը այս նոր ասպարեզը մտնելիս, և ո՞րն էր երկշաբաթերթի հիմնական նպատակը: Իր հրատարակած առաջին ծանուցման մեջ խմբագիրն ասում է, որ նոր հանդեսի գլխավոր ցանկությունն է լինելու հայ մանուկների դաստիարակությունը. այն պարունակելու է կրթական, բարոյական, պատմական, վիպական երկեր և այնպիսի հոդվածներ, որ կկարողանան «տղայոց միտքը սրել»: Նա ընդգծում է նաև գլխավոր մի ուրիշ խնդիր՝ մայրենի լեզվի իմացության կարևորությունը: Դիմելով երեխաներին՝ խմբագիրը գրում էր. «Ձեր մեջ կան շատերը, որ գիտուն տղու մը չվայելելիք բառեր կը գործածեն, անոնց հայերենը չգիտնալով»: Պարոնյանը, հանդես գալով օտարամոլության դեմ, պաշտպանում էր այն առաջավոր դրույթը, ըստ որի՝ պահանջվում էր մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործը կազմակերպել մայրենի լեզվով: Անհրաժեշտ է նշել այն հանգամանքը, որ շատ երեխաներ էլ «բառերուն հայերենը գիտեն, բայց չեն գործածեր»: «Թատրոնին» մեջ ես ամեն մեկին առջև հայերենը պիտի դնեմ՝ որ դուք աշխատելով սովորիք և պետք եղած աստենը սխալ բառ չգործածեք»: Օտար բառերի գործածումը «հայ տղու մը համար մեծ ամոթ» համարելով՝ Պարոնյանը, հասկանալի է, պետք է անցներ գործնական քայլերի՝ ամսագրի էջերում հրապարակելով ոչ միայն մայրենի լեզվի, այլև հայ ժողովրդի պատմության իմացությանը նպատակաուղղված գրական-գեղարվեստական, ճանաչողական-ուսուցողական բազմազան նյութեր՝ ընդգծելով ընդհանրապես գիտելիքների, ուսման դերը, որովհետև «մարդ չի կրնար առանց անոր կատարյալ մարդ ըլլալ»:

«Թատրոն մանկանց»-ի գրական երկերը մենք բաժանում ենք երեք խմբի. 1) ինքնուրույն, արձակ երկեր՝ պատմվածքներ, առակներ, հեքիաթների մշակումներ և այլն: 2) Չափածո երկեր՝ ոտանավորներ,

⁴ Ալբերտ Ա. Մակարյան, 2010, թ. 1, էջ 14:

առակներ, հանելուկներ և այլն: 3) ֆրանսերենից կատարած փոխադրություններ, թարգմանություններ:

Երկշաբաթաթերթը տուրք չէր տալիս քրիստոնեական բարոյախոսությանը և կրոնական դոգմաներին. փոքրիկ հերոսները գործում էին սեփական կամքի ու մտքի թելադրանքով՝ ներշնչված ծնողների և հասարակության առջև ունեցած պարտքի զգացումով («Հնդկահավ և Խալիկ», «Կուկեսի մատանին» և այլն): Պարբերականում ընդգծվում էր այն հանգամանքը, որ մանկան հոգևոր կյանքը պետք է զարգանա բնականոն ճանապարհով: Մանուկների իսկական դաստիարակը համարում էր կյանքը, իրականությունը՝ իր նոր պահանջներով: Նյութերի աշխարհիկ ոգին ու աշխարհաբար մաքուր լեզուն ինքնին վկայում էին երկշաբաթաթերթի նախընտրած նպատակների մասին: Պարոնյանը հորդորում էր մանուկներին ու պատանիներին՝ ճանաչել իրական կյանքը: Սխալ չի լինի, եթե ասենք, որ հայրենասիրության, աշխատասիրության, ընկերասիրության, վերջապես անձնվեր խիզախության զգացումները թերևս ոչ մի ժանրով այնքան լավ չի հասնում երեխաներին, որքան խրատով, հեքիաթների ու ժողովրդական բանահյուսության այլ նյութերի գեղարվեստական մշակման միջոցով:

Մանուկներին շրջապատի հետ կապելու նպատակով Պարոնյանը գրվածքների նյութը սովորաբար վերցնում էր առօրյաից: Օրինակ՝ 1870-ի Կոստանդնուպոլսի Բերա թաղամասի հրդեհի նկարագրությանն էր նվիրված «Անկախության ուժը» պատկերը: Կարևորն այստեղ այնքան հրդեհի տեսարանի նկարագրությունը չէր, որքան երևույթի դաստիարակչական նշանակությունը: Այն սովորեցնում էր պատանիներին դժբախտության դեպքում ոչ թե շփոթվել, այլ ուշիմ լինել և փրկության ելքը գտնել: Ահա թե ինչու յուրաքանչյուր համարում նույն խոսքերով շեշտադրվում էին կարճառոտ պատմություններ, վարժության համար նամակներ, ճառեր, ուսումնական գիտելիքներ, պատմական տեղեկություններ, բարոյական խրատներ, հատընտիր առակներ:

Թերթը հայ երեխաներին մատուցում էր այնպիսի նյութեր, որոնք անհրաժեշտ էին նրան «կրթյալ և գովելի տղա ըլլալու համար»: Տպագրած պատմվածքների, հեքիաթների, զգալի մասի բովանդակությունը գյուղական կյանքից է: Դա պետք է բացատրել մի կողմից խմբագրի դեմոկրատական աշխարհայացքով⁵, մյուս կողմից՝ վերոհիշյալ հե-

⁵ Արևմտահայ ամբողջ գրական զարգացումը, հասարակական հոսանքների պայքարը, մամուլի և քննադատության բոլոր հիմնական երևույթները սերտորեն կապվում են Պարոնյանի անձնավորության և ստեղծագործության հետ: Պարոնյանի

քիաթների ժողովրդական ծագումով: Ճիշտ է, Կ. Պոլիս եկած պանդուխտները ճնշող մեծամասնությամբ ամուրիներ էին, չունեին տուն, տեղ, ընտանիք, որտեղ երեխաներին պատմվեին հեքիաթներ, բայց այդ ամուրի պանդուխտները գավառից բերել էին հեքիաթներ, երգեր, խաղեր, որոնք պատմվում էին, կատարվում նրանց միջավայրում՝ տոն օրերին, պատեհ առիթներով: Կա վկայություն, որ 70-ական թվականներին Պարոնյանը սիրել է լինել նրանց միջավայրում, լսել նման պատմություններ, տեսնել նրանց պարերը: Մի առիթով նա խոսում է հայաստանցի այդ հայերի պարերի առանձնահատկությունների մասին: Պետք է ենթադրել, որ որոշ ներշնչում ստացել է այդ միջավայրից:

Ուշադիր ընթերցողը կարող է իսկույն նկատել, որ Պարոնյանն իր պարբերականը հրատարակում էր այնպիսի ժամանակներում, երբ սուլթանական կառավարության կողմից սահմանափակվում էին ազգային կրթության ոլորտները, նույնիսկ որոշ դպրոցներում արգելվում էր հայոց պատմության դասավանդումը: Նման պայմաններում «Թատրոն. բարեկամ մանկանց»-ը խիզախ քայլ էր կատարում՝ անդրադառնալով հայ ժողովրդի անցյալի պատմությանը, փառաբանելով նախնիների հայրենասիրական գործերը: Պատկերազարդ տեքստերով, ինչպես և հրապարակախոսական բնույթի հոդվածներով երկշաբաթաթերթը մանուկներին ծանոթացնում էր հայրենի ժողովրդի նախնիների կյանքին ու կենցաղին, Հայաստանի հին քաղաքներին: Այսպես, Մասիս լեռը պատկերող նկարի տակ տրված է Մասիս լեռան և Վաղարշապատի հետ կապված պատմությունը: Իսկ հոդվածներից մեկում («Ճառախոսություն»⁶) նկարագրված է Վարդան Մամիկոնյանի ղեկավարությամբ հայ մարտիկների մղած ճակատամարտը, որ հոդվածագրի մեկնաբանմամբ մղվել է ոչ միայն հավատքի, այլ նաև ազգի ու հայրենիքի պաշտպանության համար:

Պարոնյանն անկեղծ է իր ընթերցողի հետ: «Բայց խոսքը մեր մեջ մնա, - գրում է նա, - գաղտուկ ըսելիք մը ունիմ ձեր ականջն ի վար: Ես այսչափ բաներ ձեզի սորվեցնել խոստացած ատենս, կան անանկ բաներ, որ ես ալ

դիրքորոշումը մոտ երեք տասնամյակի գրական-հասարակական պայքարում աչքի էր ընկնում հազվագյուտ հետևողականությամբ, նպատակի և միջոցների միասնությամբ: Այն գրականությունը, որը չի նպաստում ժողովրդի մտավոր զարգացմանը, չի համապատասխանում նրա պահանջներին, դատապարտելի է ու մերժելի: Որպեսզի գրականությունը ծառայի ժողովրդին, պետք է հարազատորեն արտացոլի հասարակական կյանքը, իրական հարաբերությունները և իր վճիռը կայացնի դրանց նկատմամբ: Այս է Պարոնյանի պահանջը: («Հայ նոր գրականության պատմություն», 1964):

⁶ «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, №2, էջ 15:

ձեզմե սորվելով պիտի գրեմ, ինչպես որ այս «Թատրոնին» մեջ գրած պատմություններուս շատը ձեզի պես պզտիկ տղոցմե սորված եմ»⁷:

Մանուկներին հասցեագրված այս երկշաբաթաթերթում մեծ թիվ են կազմում թարգմանական երկերը. և դա շատ հասկանալի է, չունենալով հիմնական աշխատակիցներ, խմբագիրը, այն էլ ոչ մանկական գրող, ի վիճակի չէր մենակ ստեղծագործել 16 էջանոց կիսամյա մի հանդես լցնելու չափ նյութ:

Պարոնյանը ֆրանսերենից կատարել է փոխադրություններ, տեղայնացնելով և՛ նկարագրվող միջավայրը, և՛ մարդկանց: Դժբախտաբար, բուն հեղինակների անունը չտալով, չի օգնում մեզ իմանալու, թե ումի՞ց է վերցրել ու փոխադրել դրանք: Ավելի ն. նա կարող է, անգամ, մոլորության մեջ գցել ոմանց՝ կարծել տալով, թե առաջին դեմքով պատմվող որոշ պատմություններ վերցված են երգիծաբանի կյանքից:

Յուրաքանչյուր համարում տպագրվում էր չորս նկար: Այս քանակը պահպանվել է մինչև վերջը: Հանդեսում տեղ գտած յուրաքանչյուր նկար ուշագրավ է և խնամքով ընտրված: Նրա հրատարակած հարյուրավոր նկարների մեջ դժվար է գտնել որևէ հապճեպ կատարած գործ:

«Թատրոն. բարեկամ մանկանցը» թողել է մանկական պարբերականի համար կարևորություն ունեցող լավ ավանդույթներ: Գեղեցիկ ձևավորումը, ճաշակով ընտրված նկարները, գիտահանրամատչելի նյութերի բազմազանությունը, որ գրավել են ընթերցողների ուշադրությունը, կարևոր են մանկապատանեկան մամուլի համար: Թեև շաբաթաթերթում գերակշռողը մանուկների մեջ ընթերցանության սեր պատվաստող գեղարվեստական նյութերն էին՝ պատմվածքներ, հեքիաթներ, բանաստեղծություններ, առակներ, հանելուկներ, բայց քիչ չէին նաև գիտահանրամատչելի տարաբնույթ ուսանելի զրույցները, ակնարկները, որոնք զանազան հետաքրքրաշարժ, գիտելիքները հարստացնող տեղեկություններ էին հաղորդում պատմությունից, աշխարհագրությունից («Սեբաստիա», «Զմյուռնիա», «Վենետիկ»), բնությունից, կենդանական աշխարհից («Կապիկ», «Գայլ», «Առյուծ», «Ռեզեդյուր») և այլ ոլորտներից:

Մանկական պարբերականում նկատվում էր նաև Պարոնյանի հումորը, որն իր արտահայտությունն էր գտնում հատկապես կենցաղային առօրյա հարցերին նվիրված հոդվածներում: Անդրադառնալով հագուստների նորաձևությանը, Պարոնյանը քննադատում էր այն աղջիկներին ու կանանց, որոնք չարաշահում էին նորաձևությունը: «Բայց հիմակուան նորասիրությունն ալ կուզե, որ կնիկներուն գլուխը մազե լեռ մը

⁷ «Թատրոն բարեկամ մանկանց», 1876, №1, էջ 2:

ըլլա, և գլխարկն ալ լեռան մեկ քովը բուսած սունկի (մանթար) պես բան մը»: Նման նորաձևությունը նա համարում էր «դատարկասեր թեթևամիտների պճնասիրություն»: Ապա հորդորում էր հայ աղջիկներին «պարզասիրության հետևին», հագնվեն «պարզ ու կոկիկ», չէ որ «քաղաքակրթյալ ազգերն ավելի իրենց խելքը և միտքը զարդարելու ետև կըլլան, քան թե իրենց:

Պարոնյանը ուսումնասիրում էր մանուկների հոգեբանությունը, ծանոթանում դպրոցական ցածր ու միջին տարիքի երեխաների հետաքրքրություններին: Ուսանելի բազմազան նյութեր էին հրապարակվում նաև շաբաթաթերթի «Մտավոր վարժություն», «Բարոյական դասեր», «Ձեռնածության խաղեր» և ուրիշ բաժիններում: Այս ամենի նպատակը հայ երեխաներին բազմակողմանի կրթելը, նրանց հայրենասիրության, մարդասիրության և մարդկային այլ վեհ զգացումներով տոգորելն էր, արդարության, ճշմարտության, ժողովրդի ազատության ու բարօրության համար պայքարող մարդ-քաղաքացի դաստիարակելը: Շաբաթաթերթում տպագրվող ինչպես ճանաչողական-ուսուցողական, այնպես էլ գեղարվեստական նյութերի զգալի մասի հեղինակն ինքը՝ Հակոբ Պարոնյանն էր, թեև նկատելի էր նաև այլ հեղինակների մասնակցությունն այդ աշխատանքներին (Մատթեոս Մամուրյանը՝ «Մանր վեպ» խորագրով պատմվածքներով, Գ. Այվազյանը, Ա. Գալֆայանը՝ իրենց ինքնուրույն և Եզոպոսից, Լաֆոնտենից, Կոիլովից կատարած թարգմանական առակներով, Ռետթեոս Պերպերյանն իր բանաստեղծություններով և ուրիշներ):

Հ. Պարոնյանի մանկական պատմվածքներն ու գրույցները սեղմ են, գերծ ավելորդ նկարագրությունից, աչքի են ընկնում հետաքրքրաշարժ, պարզ ոճական հյուսվածքով, զվարճալի երանգներով, լեզուն սահուն է, մատչելի՝ մայրենիի ոգուն հարազատ տարերքով:

Գրողի ստեղծագործական «մանկաշխարհի» յուրահատկություններն արտահայտող այս պարբերականը գոյատևում է ընդամենը մեկ տարի: Չնայած նյութական և այլ կարգի դժվարություններին՝ նա, յուրաքանչյուր ամսի 1-ին և 16-ին հրատարակելու խոստումը պահելով, շարունակում է մինչև 1876 թ. դեկտեմբերի վերջը, հրապարակ հանում 24 համար՝ իր ընթերցողներին տալով բազմազան ու բազմապիսի նյութեր պարունակող մոտ 200 էջանոց գեղեցիկ մի հավաքածու: 1876 թ. դեկտեմբերի 16-ին հրատարակվում է պարբերականի վերջին համարը: Վերջին համարում հուզիչ մի հայտարարությամբ հրաժեշտ է տալիս իր փոքրիկ բարեկամներին և բաժանվում նրանցից: «Հրաժեշտ» վերնագիրը կրող հոդվածում բացատրում է, թե ինչու է հարկադրված եղել դադարեցնելու սիրելի հանդեսը: Դա շատ անկեղծ ու մտերմիկ խոստովանություն է, որ նա անում է ոչ թե իր փոքրիկ ընթերցողներին, որոնցից թաքցրել էր տարվա

ընթացքում իր կրած նյութական գոհողությունները, այլ նրանց ծնողներին, որոնց գրպանից էր դուրս գալիս բաժանորդագիրը: Նա հետաքրքրական փաստեր է հաղորդում հանդեսի մինչ այդ ունեցած վիճակի մասին, ասում է, թե տպագրական գործից հասկացող ամեն ոք գիտի, որ նման բազմաձախս մի հրատարակությունը իր գոյությունը կարող է պահպանել առնվազն 1000 բաժանորդ ունենալու դեպքում, մինչդեռ իր բաժանորդների թիվը 220-ից չի անցել:

Մանուկներին հասցեագրված այս երկշաբաթաթերթը ժամանակին արժանացել է ժամանակի առաջադեմ մտավորականության բարձր գնահատականին: Մատթոս Մամուրյանը, անդրադառնալով Հակոբ Պարոնյանի գործունեությանը, գրել է. «Երբեմն «*Մեղու*»-ի, այժմ մյուս *Թատրոնի*⁸ հեղինակն ոչ միայն գիտի Թեմուկրիտեսի ծաղրն ու ծիծաղը մեր թերությանց վրա ցույց տալ, այլ կծու ու մտացի սլաքներով տղայոց հետ պարզ ու կրթական լեզվով խոսել, միտք բանալու, սիրտ կրթելու համար հատուկ վեպեր բարոյական խրատներ հերյուրել, այս ավելի դժվար արվեստ է, քան մյուսը: Ազգին մեջ որչափ շատանան այսպիսի թերթերը, այնքան բարենշան երևույթ մը է»⁹:

1877 թ. հունիսի մեկին հրապարակ է գալիս «Թատրոն մանկանցը»՝ նոր տնօրինությամբ և նոր խմբագրությամբ: Նույն թվականի հունիսին Կ. Եազմաճյանը իր ձեռքն է վերցնում «Թատրոն. բարեկամ մանկանցի» հրատարակության գործը: Պարոնյանն ստորագրել է միայն որպես «արտոնատեր», որ ոչ մի առնչություն չունեի բովանդակության հետ: Թերթի գաղափարական ու դաստիարակչական ուղղությունը գրեթե չի փոխվում, հիմնականում մնում է նույնը: Այնտեղ տպագրվում էին նյութեր նաև դպրոցական բարձր դասարանի աշակերտության համար: Վերոհիշյալ նոր հրատարակությունը ևս մեկ տարուց ավել չուներ: Չունենալով բավարար թվով բաժանորդներ՝ մանկական պարբերականը 1878 թ. հունիսին ընդմիջտ փակվեց:

Եվ արդարև, Հ. Պարոնյանը «Թատրոն մանկանցը» ոչ թե խմբագրել է 1876-1878 թթ., ինչպես հիշատակության կարգով գրվել է մինչև այժմ, այլ խմբագրել է ուղիղ մեկ տարի, 1876 թ. հունվար ամսից մինչև դեկտեմբեր: Նոր շրջանի «Թատրոն մանկանցը», որ լույս է տեսել 1877 թ. հունիս ամսից մինչև 1878 թ. հունիսը, Պարոնյանի հետ չի կապվում:

⁸ Խոսքը «Թատրոն բարեկամ մանկանցի» մասին է, որը Պարոնյանի 1874 թ. հրատարակած «Թատրոն» շաբաթաթերթից հետո նույնանուն վերնագրով մյուս պարբերականն է:

⁹ «Արևելյան մամուլ», 1876, № 2, էջ 83:

Լ. Հարությունյան

Դիտարկումներ «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականի առիթով
Ամփոփում

1876-ի հունվարի 1-ին հրապարակ է գալիս «Թատրոն. բարեկամ մանկանցի» առաջին համարը: Կ. Պոլսում լույս ընծայելով «Թատրոն. բարեկամ մանկանց» երկշաբաթաթերթը՝ երգիծաբանը կատարում է իր անդրանիկ քայլերը մանկապատանեկան մամուլի հիմնադրման ու զարգացման ուղղությամբ: Չնայած նյութական և այլ կարգի դժվարություններին՝ նա, յուրաքանչյուր ամսի 1-ին և 16-ին հրատարակելու խոստումը պահելով, շարունակում է մինչև 1876 թ. դեկտեմբերի վերջը, հրապարակ հանում 24 համար՝ իր ընթերցողներին տալով բազմազան ու բազմապիսի նյութեր պարունակող մոտ 200 էջանոց գեղեցիկ մի հավաքածու:

Л. Арутюнян

Несколько замечаний по “Театр — друг детей”

Резюме

1 января 1876 года был опубликован первый номер издания “Театр — друг детей”. Опубликовав еженедельную газету “Театр — друг детей” Акоп Паронян сделал свои первые шаги в развитии молодежных СМИ. Эта газета отражающая определенные детские черты, просуществовала всего лишь один год. Несмотря на материальные и другие трудности он каждый месяц 1 и 16 числа продолжает печатать газету до 1876 г. декабря. Он опубликовал 24 номера, давая своим читателям широкий спектр материалов и прекрасную коллекцию из 200 страниц.

L. Harutyunyan

Some observations on “Theatre. Friend of children” periodical

Summary

The first number “Theatre. Friend of children” appeared on announced date in 1876 on January 1. Hakop Paronyan publishing “Theatre. Friend of children” biweekly newspaper took his first steps for the development for children press. Paronyan came out against xenomania, proved a foremost thesis, according to which it was required to organize an upbringing and education of the young generation with the native tongue. This periodical included writer's creative, the children world peculiarities which existed only one year. He kept his promise and continued to publish every month untill the end of 1876 January despite the material difficulty and other things. He published over 24 numbers by giving his readers beautiful various materials about 200 pages collection.